Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

----- հոկտեմբերի 2009 թ. N---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ ԱՄԱԼՅԱ ԱՐԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական արտիստուհի, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Ամալյա Արազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի 48-րդ շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության հեղինակ՝
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող
աշխատանքների, առողջապահության, սոցիալական
պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ա. Երնջակյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ ԱՄԱԼՅԱ ԱՐԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀՀ ժողովրդական արտիստուհի, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, բազմավաստակ դերասանուհի Ամալյա Արազյանի ներդրած ավանդը հայ թատերական արվեստի բնագավառում: Դերասանուհին շուրջ 60 տարվա ընթացքում 100-ից ավելի կերպարներ է կերտել Մայր թատրոնի բեմում, նա հանդես է եկել այնպիսի աստղաբույլի հետ, ինչպիսիք են Վաղարշ Վաղարշյանը, Ավետ Ավետիսյանը, Հրաչյա Ներսիսյանը, Գուրգեն Ջանիբեկյանը, Դավիթ Մալյանը և այլոք:

Ինչպես նաև հաշվի են առնվում Հայաստանի թատերական գործիչների միավորման, Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի միջնորդությունները անվանի դերասանուհու հիշատակը հավերժացնելու համար:

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Ա. Երնջակյան**